ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N 01/04/1481-15

«04» 03 2015թ.

ՀՀ «ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»-Ի
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Ի լրումն Ձեզ 2015 թվականի մարտի 03-ին ուղարկված Գյումրիի քաղաքապետի N 01/04/1447-15 թվակիր գրության և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Ձեզ եմ վերադարձնում Գյումրիի քաղաքապետարան ս.թ. մարտի 4-ին ներկայացված Ձեր գրությունը, քանի որ դրանում առաջադրված պահանջը չի կարող քննարկվել Գյումրիի քաղաքապետի կողմից:
«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի համաձայն՝ «Իրազեկումը կարող է ներկայացվել հավաքի անցկացման **օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ, քան 30 օր առաջ**»:
Ըստ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի «իրազեկումը քննարկող և որոշում կայացնողը համայնքի ղեկավարն է»:
Այս իրավական նորմերից բխում է, որ ***համայնքի ղեկավարը իրավասու է քննարկել և որոշում կայացնել միայն այն իրազեկումների վերաբերյալ, որոնք ներկայացված են օրենքով սահմանված ժամկետներում***: Քանի որ Ձեր ներկայացրած դիմումներում պահանջվում է ի գիտություն ընդունել ս.թ. մարտի 7-ին 100 և ավելի մասնակից ունեցող հանրային հավաքի անցկացման մասին իրազեկումները, ապա հայտնում եմ, որ նման հարցի քննարկումը չի մտնում Գյումրիի քաղաքապետի իրավասության մեջ:
Ավելին, Ձեր դիմումը չի կարող վերահասցեագրվել որևէ այլ վարչական մարմնի, քանի որ հանրային հավաքների իրազեկման հարցերը քննող և որոշում կայացնող միակ մարմինը այդ համայնքի ղեկավարն է:
Միաժամանակ, ևս մեկ անգամ հորդորում եմ Ձեզ հետայսու հանրային հավաքների անցկացման վերաբերյալ համապատասխան իրազեկումները քաղաքապետարան ներկայացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ